

Ալեքսանդր Ս. Մանասյան
փիլիսոփ. գիտ. դոկտոր

**ԱԳՐՔԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

Ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների դիտանկյունից*

1. Ընդհանուր կարգի դիտարկումներ սկզբունքների մասին

2013-ի փետրվարին կյրանա 25 տարին այն օրվանից, երբ ԽՍՀՄ քաղաքական օրակարգում որպես ներքին հարց հայտնվեց Ղարաբաղյան հիմնախնդիրը: 1991-ին՝ ԽՍՀՄ լուծարումից անմիջապես հետո, արդեն զինված բախման տեսք ստացած Ղարաբաղյան հիմնախնդիրը միջազգայնացվեց: Նրա կարգավորումը հայտնվեց ԵԱՀԽ/ԵԱՀԿ հովանու ներքո: Դրանից հետո անցած շուրջ քսան տարիների ընթացքում միջազգային հանրությունն ի դեմս ԵԱՀԿ-ի և նրա կառույցում ձևավորված Մինսկի խմբի, այդպես էլ չկարողացավ «հաշտեցնել կողմերին» և գտնել նրանց համար ընդունելի լուծում:

Իրավաքաղաքական առումով Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ձգձգումը որպես կանոն կապվում է միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքների՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման և տարածքային ամբողջականության տարբեր մեկնաբանությունների հետ: Երբեմն ոչ միայն ակնհայտ քաղաքական շարժառիթներով գրված, այլև բարձր գիտականության հավակնություններ ունեցող հրապարակումներում առաջ է տարվում ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի նկատմամբ տարածքային ամբողջականության գերակայության մասին դրույթը: Մինչդեռ, ժողովուրդների ազատ ինքնորոշման մասին ՄԱԿ-ի և միջազգային այլ կառույցների կողմից հեղինակված բոլոր հիմնարար փաստաթղթերը ընդունվել են **պետությունների** կողմից: Պետություններն են մշակել և ընդունել մի սկզբունք, որն առաջին հերթին կոչված է կարգավորելու իրենց, այսինքն՝ պետությունների և ժողովուրդների՝ որպես միջազգային քաղաքական գործընթաց-

Բ (Ը) ԳՊԻԻ, քիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010

ՎԵՄ համահայկական համոզես

* ԼԳԳ-ի ձևավորման իրավական հիմքերի ուսումնասիրության բնագավառում լուրջ ներդրում ունեցող պրոֆ. Ա. Մանասյանը ներկա հրապարակման մեջ «շրջում է» հիմնախնդրի հանդեպ իր մոտեցման դիտանկյունը: Այս անգամ քննարկման առարկա դարձնելով Ադրբեյջանի՝ որպես պետության, սահմանների լեգիտիմության հարցը, նա էլ ավելի հիմնավոր փաստարկներ է առաջադրում հօգուտ ԼԳԳ ինքնորոշման իրավունքի: Խմբ.: Գողվածն ընդունվել է տպագրության 12.11. 2010:

ների երկու գլխավոր սուբյեկտների փոխհարաբերությունները: Ինքնորոշման սկզբունքը որպես միջազգային իրավունքի համապարտադիր սկզբունք հռչակած պետությունները հաստատել են, որ **բոլոր ժողովուրդները** իրավունք ունեն ազատ, առանց արտաքին հարկադրանքի որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը, ինչպես, օրինակ, դա արձանագրված է 1966 թվականի՝ ՄԱԿ-ի կողմից ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում»¹: Այդ հիմնարար փաստաթուղթը սկսվում է հետևյալ դրույթով. «**Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք**»: Ասել է թե՛ ինքնորոշման իրավունքը սահմանվել է **բոլոր ժողովուրդների** համար, ի թիվս որոնց՝ այդ փաստաթղթերը մշակած և ընդունած պետությունների ժողովուրդների համար, ինչից բխում է, որ այս սկզբունքը որդեգրած պետությունները որևէ հակասություն չեն տեսել տարածքային ամբողջականության և ժողովուրդների ազատ ինքնորոշման միջև: Եթե այս կամ այն պետության մեջ համահավաք կերպով ապրող որևէ ժողովուրդ ցանկանում է ինքնորոշվել ընդհուպ ինքնիշխան պետության հիմնումը և անջատվել այն պետությունից, որի սահմաններում ինքը եղել է մինչ այդ, ապա դա բնավ չի կարող մեկնաբանվել որպես պետության տարածքային ամբողջականության խախտում:

Պետք է շատ հեռանալ անաչառության և գիտական օբյեկտիվության չափանիշներից, որպեսզի խնդրին առնչվող՝ ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերը մեկնաբանվեն այլ կերպ, թեև դա, այնուամենայնիվ, արվում է տարբեր հեղինակների կողմից: Ժողովուրդների ազատ ինքնորոշմանը վերաբերող ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերի համապատասխան դրույթներին իրենց տառին ու ոգուն հակասող մեկնաբանություններ վերագրելն ունի հասկանալի քաղաքական շարժառիթներ, որոնք մնում են, ինչպես ընդունված է ասել, տեքստից դուրս: Որոշակի անկեղծություն է պետք ասելու համար այն, ինչ հաճախ պահվում է մտքում: Եվ դա այն է, որ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո որոշակի սահմաններում ճանաչված բազմազգ շատ պետություններ այսօր «հաճույքով չեն ընթերցում» ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքին վերաբերող ՄԱԿ-ի փաստաթղթերի հոդվածները՝ դրանցում տեսնելով իրենց տրոհման «իրավական ականները»:

Հայտնի են այն փաստարկները, որ ընդդեմ ինքնորոշման բերվում են նման վերլուծություններում: Ահա դրանցից երկուսը:

Առաջին, ժողովուրդների ազատ ինքնորոշման մասին փաստաթղթերը ընդունվել են գաղութատիրության վերացման՝ պատմականորեն առանձնահատուկ մի շրջանում և նկատի են ունեցել հենց գաղութային համակարգի հաղթահարման խնդիրը:

Երկրորդ, ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը չի կարելի բացարձակացնել և մեկնաբանել որպես նոր ազգային պետություններ հիմնելու անգուսպ գործընթացը սատարող սկզբունք: Ինքնորոշման իրավունքը չի նշանակում ինքնիշխան պետություն հիմնելու իրավունք՝ անխտիր բոլոր դեպքերում, քանի որ բազմազգ պետության ներսում ժողովուրդները կարող են ինքնորոշվել ինքնավարության ամենատարբեր ձևերով:

Կարելի է բերել նաև այլ փաստարկներ, սակայն դրանք բոլորը այս կամ այն

¹ Դաշնագիրը ՄԱԿ-ի կողմից ընդունվել է 1966 թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ է մտել 1976 թ. հունվարի 3-ին: См и Международное право в документах. М., 1997, с. 92-100.

կերպ հանգում են ինքնորոշման սկզբունքի նկատմամբ տարածքային ամբողջականության գերակայության հիմնավորմանը: Տարբեր մեկնաբանությունների միջոցով ինքնորոշման սկզբունքի հեռացումը իր «բնագրային իմաստից» իր հերթին անխուսափելիորեն վերափոխում է տարածքային ամբողջականության սկզբունքի բովանդակությունը՝ երբեմն այն անհատափառելի արգելք դարձնելով ինքնորոշման սկզբունքի համար:

Անշուշտ, մենք հեռու ենք հարցի պարզունակացումից: Այդ սկզբունքների գործադրումը նույնքան բարդ է, որքան բարդ են պետությունների ու ժողովուրդների հարաբերությունները և նոր պետությունների ձևավորման գործընթացները: Այն դաշտը, որտեղ կիրառվում են սկզբունքները, լայն հնարավորություններ է տրամադրում դրանց քաղաքականացման, միջազգային գործընթացներում անթույլատրելի սուբյեկտիվիզմ և կամայականություն ներբերելու համար: Այստեղից էլ հասկանալի է միանգամայն իրական այն վտանգը, որ մենք կարող է գործ ունենանք ոչ թե այդ սկզբունքների, այլ դրանց այլասերված տարբերակների (մուտանտների) հետ, որոնք ոչ մի առնչություն չեն ունենա ժողովուրդների իրավահավասարության ու միջազգային արդարության այն իդեալների հետ, որոնք դրված են ՄԱԿ-ի Կանոնադրության ու մյուս հիմնարար փաստաթղթերի հիմքում: Այդ հանգամանքը բարձրացնում է խոշոր տերությունների բարոյական ու քաղաքական պատասխանատվությունը այն բանի համար, որ **տարածքային ամբողջականության սկզբունքը չդառնա էթնիկական գտումների ու ցեղասպանության քողարկման միջոց, իսկ ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը՝ պետությունների արհեստական կազմաքանդման գործիք:**

Խնդրի բարդությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նոր պետությունների առաջացման կապակցությամբ այդ սկզբունքների գործադրման ամեն մի կոնկրետ դեպք պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Դրանցից յուրաքանչյուրը անկրկնելի է թե՛ իր ներքին պատմության, թե՛ միջազգային այն իրադրության տեսակետից, որում ծավալվում է նոր պետության ծնունդը և հետևաբար իրացվում է ինքնորոշման իրավունքը: Այլ կերպ ասած, այդ սկզբունքների կիրառումը ենթադրում է կարգավորման ենթակա հիմնախնդրի փաստական նյութի հետ «այնպիսի հողակցում», այնպիսի առարկայական լեցունություն ու կոնկրետություն, որ բացառվի դրանց այլասերումը և հեռացումը իրենց կանխատրված բարձր իմաստներից:

Սակայն առանձին ամեն մի խնդրի քննարկում այսպես թե այնպես մեկնարկում է դրան կանխատրված ելադրություններից, որոնք պայմանավորում են, ինչպես ընդունված է ասել՝ քննարկման ընդհանուր գաղափարախոսությունը և հաճախ կանխորոշում նրա ուղղվածությունն ու արդյունքները: Դրանք կարող են նախապես ձևակերպվել բացահայտ ու բացորոշված ձևով, սակայն կարող են նաև քննարկմանն ու վերլուծությանը կանխատրվել լռելյայն (անբացահայտ) ձևով: Ժողովուրդների ազատ ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերության հարցի քննարկման պարագայում կարևոր է նկատի ունենալ ինքնին հասկանալի, ակնհայտ ու անվիճելի մի դրույթ, որը մեկնակետ պիտի լինի խնդրի ցանկացած քննարկման դեպքում:

Եվ դա այն է, որ լեզիտիմ սահմանները «հայտնվում են» ինքնորոշման արդյունքում, որ ինքնորոշման ակտը նախորդում է սահմանների որոշմանը: Իսկ դա նշանակում է, որ տարածքային ամբողջականության և սահմանների անձեռն-

մխելիության սկզբունքները իրավական բովանդակություն և օրինականություն են ձեռք բերում ինքնորոշման ակտի շնորհիվ:

Հակառակը ոչ միայն հակատրամաբանական ու հակահրավակյան է, այլև վտանգավոր է միջազգային ողջ համակարգի համար: Իսկ եթե դա այնուամենայնիվ տեղի է ունենում, եթե քաղաքական ինչ-ինչ խաղերի արդյունքում սահմաններ են պարտադրվում դրսից՝ անտեսելով նրանց ներսում հայտնված ժողովուրդների կամքը, ապա անկասկած է, որ դա պետք է ուղեկցվի բռնություններով ու միջազգային իրավունքի մյուս սկզբունքների կոպիտ խախտումներով:

Մեր քննարկման նյութը Ադրբեջանական Հանրապետության սահմանների լեգիտիմության հարցն է, ուստի կփորձենք Ղարաբաղյան հիմնախնդրի օրինակի վրա ցույց տալ, թե նրա կարգավորման շուրջ ծավալված բանավեճի ընթացքում ինչպես են ձևախեղվել միջազգային իրավունքի սկզբունքները: Բայց նախ՝ այն հանրահայտ կամ քիչ հայտնի փաստերի մասին, որոնց անտեսումով է պայմանավորված դիտարկվող սկզբունքների այլասերումը:

2. Թուրքական բանակի կողմից Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ստեղծման փորձը 1918 թվականին

Ինչպես հայտնի է, մինչև 1918 թվականը Արևելյան Անդրկովկասում «Ադրբեջան» անունով պետություն կամ աշխարհագրական տարածք չի եղել: Չի եղել նաև այդ էթնոնիմն ունեցող ժողովուրդ: Այսպիսով՝ «Ադրբեջան» անունով ո՛չ տարածք, ո՛չ պետություն, ո՛չ ժողովուրդ՝ նախքան 1918-ը: Անդրկովկասի բնիկ ժողովուրդներից հայերն ու վրացիներն են անցյալում ունեցել իրենց ազգային պետությունները, ուստի Ռուսաստանյան կայսրության անկումը նրանց համար իրենց պետականությունների վերականգման բարենպաստ առիթ պիտի դառնար:

1918-ին տարածաշրջանում առաջին անգամ պետություն հիմնելու հայտ ներկայացվեց նաև Արևելյան Անդրկովկասի թուրքախոս այն բնակչության անունից, որին կայսրության վիճակագրական աղբյուրներում տրվել էր կովկասյան թաթար անվանումը: Դա մի մասով դեռևս քոչվոր և իր մյուս մասով նստակեցության անցած, հավատքով առավելապես շիա-մահմեդական այն զանգվածն էր, որի մի մասը **ազերիներ**, նույնն է թե՛ թուրքախոս պարսիկներ էին: Ոչ ոք չի կարող ասել, թե թուրքախոս այդ զանգվածի ո՞ր մասն է կազմել էթնիկ թուրքը, բայց այն, որ այս վերաբնակներին Պարսկաստանի քաղաքական ու մշակութային ազդեցությունից հեռացնելու համար կայսրությունը վարել է ապահրանականացման (իրանազերծման) քաղաքականություն (политика деиранизации), հայտնի փաստ է ²:

Ստամբուլը և Թեհրանը նույնպես չէին կարող անտարբեր լինել Արևելյան Անդրկովկասում ծավալվող էթնիկական գործընթացների նկատմամբ: Ստամբուլը առավելություն ուներ այդ հարցում, քանի որ ինքը՝ Ռուսաստանն էր նպաստում երկրամասի թուրքացմանը:

1918 թվականին, օգտվելով խառնակ իրադրությունից, որի մեջ հայտնվել էր Ռուսաստանը համաշխարհային պատերազմի և հեղափոխական ցնցումների հետևանքով, Թուրքիան ռազմական ինտերվենցիա ձեռնարկեց Անդրկովկասում:

2 Стів Тадеуш Свентеховский. Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане // Азербайджан и Россия: общества и государства. М., 2001, с.13.

Համաձայն 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի՝ Թուրքիան իրավունք չուներ հատելու Ախուրյանով անցնող սահմանը: Պայմանագրի խախտումով Անդրկովկաս խուժած թուրքական կանոնավոր բանակին երկու առաջադրանք էր տրված: Առաջին՝ Արևելյան Հայաստանում (Ռուսահայաստանում) շարունակել և ավարտին հասցնել Հայոց ցեղասպանությունը և այդ ձևով լուծել Հայկական հարցը: Երկրորդ՝ տարածաշրջանում իր սահմաններից դուրս հիմնել նոր թուրքական պետություն: Երկրորդ խնդիրը լուծելու համար թուրքերը պիտի մտնեին Բաքու, որտեղ իշխանությունը գտնվում էր երկրամասի հայության աջակցությունը վայելող և լեգիտիմ ձևով իշխանության եկած Բաքվի Կոմունայի ձեռքում³: Այդ ձևով իշխանությունը պիտի հանձնվեր տեղի թուրքերին՝ կովկասյան թաթարներին, որոնց քաղաքական լիդերները թուրքերի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ երկրամասի մուսուլմանների անունից Թիֆլիսում հռչակել էին նոր թուրքական պետություն՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն (ԱԴՀ)⁴:

Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ Ապարանի տակ տեղի ունեցած ճակատամարտերում հայկական զորամիավորումներն ու աշխարհագրայինները ձախողեցին Արևելյան Հայաստանում հայերին բնաջնջելու թուրքական ծրագիրը: Շարունակելով երկրամասի հայկական գյուղերի հրկիզումն ու կոտորածները, թուրքական բանակը հիմնականում՝ Ղարաքիլիսա-Գանձակ գծով շարժվեց դեպի Բաքու և մի քանի ամիս տևած կատաղի մարտերից հետո սեպտեմբերի 15-ին գրավեց քաղաքը (Բաքուն հանձնելու վերջնագիրը Նուրի փաշան ներկայացրել է Բաքվի Հայոց ազգային խորհրդին): Ավելի քան 30 հազար հայեր զոհ գնացին եռօրյա կոտորածներին: Քաղաքի իշխանությունը թուրքերը հանձնեցին իրենց հետ Գանձակից բերած Խան Խոյսկու կառավարությանը: Հայտնի չէ՝ ասպարեզում կհայտնվե՞ր ընդհանրապես այսպես կոչված՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, եթե թուրքական կանոնավոր բանակը չհիմներ այդ պետությունը, որը դարձավ նույնպես ազրեխայի միջոցով հիմնված մեկ այլ անօրինական պետական կազմավորման՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության նախօրինակը: Բաքվում «հարցը լուծելուց» ընդամենը մեկ շաբաթ հետո թուրքական բանակը հայտնվեց Արցախի (Լեռնային Ղարաբաղի) մատույցներում, որտեղ իշխանության էր եկել Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներակայացուցիչների կողմից ձևավորված Ազգային Խորհուրդն ու Ժողովրդական Կառավարությունը: Թուրքերին չհաջողվեց ծնկի բերել Լեռնային Ղարաբաղը: Դա չհաջողվեց նաև անգլիացիների աջակցությունը ստացած ԱԴՀ-ին՝ այն բանից հետո, երբ պատերազմի ավարտից հետո թուրքերը ստիպված էին թողնել Անդրկովկասը: Ազգերի լիգան 1920-ին մերժեց իրեն անդամակցելու ԱԴՀ դիմումը նաև այն հիմնավորումով, որ նա վարչական կամ քաղաքական վերահսկողություն չունի այն տարածքներում, որոնց ինքը հավակնում է⁵:

3 Տե՛ս E.A.Токарежский. Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане. Баку, 1957. с. 9-29.
 4 Թուրքական բանակի հիմնած նոր պետության անվանման ընտրությունը Իրանին հասցեագրված սպառնալից ակնարկ էր: Իրանի հյուսիսարևմտյան նահանգի Ատրպատական-Ազերբայջան անվանման սեփականումը նշանակում էր, որ վաղ թե ուշ թուրքերը պիտի հավակնեն նաև իրանական այդ տարածքին (այսօր էլ դա չի հանվել Անկարայի ու Բաքվի ծրագրերից):
 5 Տե՛ս League of Nations. The Records of the First Assembly. Meetings of the Committees II. Geneva 1920; p. 173-174// Нагорный Карабах в международном праве и мировой политике Документы и комментарий. Том I, М., 2008, с. 574.

Իսկ վերջինս հավակնում էր Անդրկովկասի մեծ մասին՝ Բաքվից մինչև Բաթում, հաշվի չնստելով այն բանի հետ, որ այդ հսկայածավալ տարածքներում ապրող ժողովուրդները չեն ցանկանում ապրել տվյալ պետության սահմաններում⁶:

Այդպես էլ Ազգերի լիգայի կողմից դե-յուրե ճանաչում չստացած և փաստացի սահմաններ ձեռք չբերած ԱԳՀ-ն պատմության թատերաբեմը լքեց, երբ արդեն խորհրդայնացված Ռուսաստանի տասնմեկերորդ Կարմիր բանակը 1920 թ. ապրիլին մտավ Բաքու, տապալեց թուրքական բանակի կողմից այդտեղ բերած կառավարությունը և հռչակեց Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ԱդրԽՍՀ):

Այն հարցը, թե ինչու⁷ 1918 թվականին թուրքական բանակի կողմից հիմնադրված նոր թուրքական պետությունը՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, այդպես էլ ձեռք չբերեց լեզիտիմ սահմաններ և չստացավ Ազգերի լիգայի ճանաչումը, ստանում է միանշանակ պատասխան՝ թուրքական սվիմներով Բաքվում հայտնված իշխանությունները փորձում էին սահմաններ ձեռք բերել ինքնորոշման ակտի շրջանցումով, հավակնվող տարածքների ժողովուրդների կամքին հակառակ, ջարդերով ու բռնություններով, ինչն առաջին հերթին իրագործվում էր հայերի նկատմամբ: ԱԳՀ կողմից հավակնվող և Ազգերի լիգա ներկայացված սահմանները ապօրինի էին առաջին հերթին այն պատճառով, որ չէին կարող հաստատվել ինքնորոշման ակտով: Ռազմական միջամտությամբ ի հայտ եկած ԱԳՀ-ն, որի իրավահաջորդը 1991-ին դարձավ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը, պատմության բեմը լքեց առանց լեզիտիմ կամ փաստացի կերպով վերահսկվող սահմաններ ձեռք բերելու:

3. Խորհրդային Ադրբեջանի հիմնումը Ռուսաստանի Կարմիր բանակի կողմից

Անդրկովկաս վերադարձած Ռուսաստանը չփոխեց թուրքերի կողմից հիմնած պետության «Ադրբեջան» անունը: Բոլշևիկյան Մոսկվան որոշեց վերցնել Իրանի **Ադրբեջան** նահանգին հավակնելու թուրքական պատրաստի ծրագիրը՝ հարմար առիթով այն «կարմիր տարբերակով» իրականացնելու համար (ինչպես հայտնի է, Երկրորդ աշխարհամարտի տարիներին «սովետները» հեռու չէին դրա իրագործումից): Մինչև Երևանում ու Թբիլիսիում խորհրդային կարգերի հաստատումը՝ նոր Մոսկվան, հետևելով Ազգերի լիգայի օրինակին, Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Չանգեզուրը ճանաչեց որպես վիճելի տարածքներ, ինչն արձանագրվեց Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թվականի օգոստոսի 10-ին նախաստորագրված պայմանագրով: Ռուսաստանում հրաշալի գիտեին, որ այդ տարածքները հայկական են, բայց հարցի լուծումը ձգձգում էին մինչև Երևանում խորհրդային կարգերի հաստատումը: Պատահական չէ, որ 1920 թվականի նոյեմբերի 30-ին՝ Երևանում խորհրդային կարգերի հաստատման հաջորդ իսկ օրը, Բաքում այսպես կոչված վիճելի տարածքները ճանաչեց Խորհրդային Հայաստանի մաս: Մեկ օր անց՝ դեկտեմբերի 1-ին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը նվիրված Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում այդ հռչակագիրը նորից հրապարակվեց: Սակայն հաջորդ

6 ԱԳՀ տարածքային անհիմն հավակնությունների քարտեզը տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий. Т. 1., М., 2008, с. 545.

օրը՝ ղեկտեմբերի 2-ին, «Бакинский рабочий» թերթում այն գետեղվեց փոխված տեքստով: Ինչպես և նախորդ օրերին՝ Նախիջևանն ու Ջանգեզուրը ճանաչվեցին Խորհրդային Հայաստանի անկապտելի տարածքներ: Իսկ հռչակագրի՝ Լեռնային Ղարաբաղին վերաբերող տեքստը փոխված էր: Եթե նախորդ օրերին Լեռնային Ղարաբաղը «վիճելի» մյուս տարածքների նման ճանաչվում էր Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս, ապա հրապարակված տեքստում հռչակվում էր, որ Խորհրդային Ադրբեջանը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ և լիիրավ ինքնորոշման իրավունքը⁷: Այդ փոփոխությանը լուրջ նշանակություն չտրվեց, քանի որ 1918-1920 թթ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները երկրամասը մի քանի անգամ հռչակել էին Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս (վերջին անգամ դա արվել էր Բաքվում խորհրդային կարգերի հաստատման և ԱդրԽՍՀ հռչակման օրերին):

Բայց Անդրկովկասի խորհրդայնացման ընթացքում պարզվեց, որ Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը տարածաշրջանում ունեն ընդհանուր շահեր: Եվ այդ հանգամանքը պայմանավորեց դեպքերի հետագա ընթացքը: Նույնիսկ այսօր, երբ այդ տարիների իրադարձությունների մեկնաբանությունները, թվում է, ազատված են բոլշևիկյան գրաքննությունից, Լենին-Աթաթուրք գործարքը հասկանալի բացատրություններ չի ստանում: Բանն այն է, որ այդ մերձեցման արդյունքում կատարված տարածքային գործարքները աննպաստ եղան ոչ միայն Հայաստանի, այլև հենց իր՝ Ռուսաստանի համար⁸:

4. Ոչ ազգային ԱդրԽՍՀ հիմնումը որպես ինքնորոշման սկզբունքը շրջանցելու պատրվակ

1921 թվականի մարտի 16-ին քեմալականներն ու բոլշևիկները Մոսկվայում կնքեցին պայմանագիր, որով որոշվեց արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանը հանձնել ԱդրԽՍՀ խնամակալությանը: Երկու պետություն որոշեցին իրենց իսկ կողմից ինքնիշխան ճանաչված մի պետության (ՀԽՍՀ-ի) տարածքը հանձնել մեկ այլ պետության (ԱդրԽՍՀ-ի) խնամակալությանը՝ առանց նրանց մասնակցության ու համաձայնության: Մոսկվան և Անկարան գիտակցում էին, որ պայմանագիրը միջազգային իրավունքի տեսակետից ապօրինի է կնքման պահից: Ահա թե ինչու որոշվեց անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների մասնակցությամբ Կարսում նոր կոնֆերանս հրավիրել՝ նրանց ստորագրություններով փաստաթղթին «իրավական տեսք» տալու համար: Ընդ որում, բոլշևիկյան Մոսկվան իր վրա վերցրեց Հայաստանի վրա ճնշում գործադրելու պարտավորությունը՝ Կարսում նրա համաձայնությունը ստանալու համար: Պայմանագիրը ստորագրվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին: Խորհրդային Հայաստանը բացահայտ ճնշումների պայմաններում տվեց Նախիջևանի երկրամասը Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը հանձնելու իր համաձայնությունը: Պայմանագրի տեքստը չի պարունակում որևէ կետ, կասկածի տակ առնելու համար այն հստակ դրույթը, որ Նախիջևանը տրվում է միայն ու միայն

7 Տե՛ս «Коммунист», газета, Баку, 2 декабря, 1920 г.
8 Տե՛ս Александр Иголкин. Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет , «Армянский вестник», М., 1998, N 3-4.

Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը, այլ ոչ թե նրա սուվերենությանը: Ի դեպ, Կարսը մինչ օրս մնում է ուժի մեջ: 2004-ին աջարական դեպքերի կապակցությամբ Անկարան և Մոսկվան հայտարարեցին, որ Անդրկովկասում սահմանների ու տարածքների կարգավիճակի մասին գործող միակ իրավական փաստաթուղթը մնում է Կարսի պայմանագիրը:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հարցին, ապա, ինչպես արդեն նշվեց, Բաքուն Լեռնային Ղարաբաղը նախ՝ ճանաչել էր որպես Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս, իսկ հետո էլ՝ ճանաչել երկրամասի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը: Բոլոր այդ հանգամանքների հաշվառմամբ և առաջին հերթին՝ հենվելով Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության բազմիցս արտահայտված կամարտահայտության վրա, 1921թ. հունիսին Խորհրդային Հայաստանը Լեռնային Ղարաբաղը հռչակեց իր անկապտելի մասը: 1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների որոշումները երկրամասը Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս հռչակելու մասին ոչ այլ ինչ էին, եթե ոչ ինքնորոշման իրավունքի իրագործում՝ միանգամայն օրինական ձևով: Իսկ սա նշանակում է, որ ի տարբերություն Արևելյան Անդրկովկասի թուրքերի (կովկասյան թաթարների), որոնց դրսից պետականություն էին պարզել՝ շրջանցելով ինքնորոշման իրավունքը, արցախահայությունը քաղաքական իր բոլոր քայլերը ձեռնարկել է՝ հենվելով միջազգային իրավունքի այդ հիմնարար սկզբունքի վրա:

Վստահ, որ ինքը պիտի ստանա բոլշևիկյան կենտրոնի աջակցությունը, Բաքուն 1921-ին հրապարակ հանեց իր հավակնությունները նաև Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Եվ դա հակառակ այն բանի, որ ԼՂ բնակչությունը բազմիցս հռչակել էր երկրամասը Հայաստանի մասը լինելու իր վճիռը, իսկ Բաքուն ճանաչել էր այն՝ 1920 թ. նոյեմբերի 30-ի իր հռչակագրով: Հարցը մտցվեց Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոյի (Կավբյուրո) պլենումի օրակարգ: Երրորդ երկրի ոչ սահմանադրական, կուսակցական այդ մարմինը տարածքային հարցեր լուծելու իրավասություններ չունեց: Եվ միայն այդքանը բավական է, որպեսզի նրա որոշումները համարվեն անիրավագոր: Ամենայն հավանականությամբ հարցը Կենտրոնի կողմից վատ էր նախապատրաստված: Միայն այդպես կարելի է բացատրել այն փաստը, որ հուլիսի 4-ին Կավբյուրոն հարցի քննարկմամբ ու քվեարկությամբ խնդիրը լուծեց՝ հօգուտ Խորհրդային Հայաստանի: Բայց այլ էր Կենտրոնի մտադրությունը, և հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, հարցը նորից մտցվեց օրակարգ: Նիստին ներկայացած Ստալինը առանց հարցի քննարկման ու քվեարկության անցկացրեց նոր որոշում: Երկրամասի ժողովրդի կամքին հակառակ, լիիրավ ինքնորոշման՝ նրա արդեն ճանաչված իրավունքի ոտնահարումով, Լեռնային Ղարաբաղը հանձնվեց Խորհրդային Ադրբեջանին՝ նրան լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով: Կավբյուրոյի որոշումը կոպիտ բռնություն էր բոլոր իմաստներով և բոլոր տեսակետներից: Բռնություն, իրագործված նաև միջազգային իրավունքի նկատմամբ: Խնդիրը միայն այն չէ, որ հարցը քննարկել է երրորդ երկրի կուսակցական մարմինը՝ Արցախի հետ ոչ մի կապ չունեցող մարդկանց կազմով: Եթե նույնիսկ Կավբյուրոյի այդ նիստին մասնակցեին արցախցի կոմունիստներ, ապա դրանից Կավբյու-

9 Որոշման տեքստը տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии. Т. 1, М., 2008, с. 639.

րոյի որոշումը օրինական չէր դառնա, քանի որ հայտնի է, որ նման հարցերի լուծման միակ օրինական ձևը հանրաքվեն է կամ բնակչության կողմից լիազորված ներկայացուցիչների որոշումը:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից չընդունված, բայց գործադրված այդ որոշման մասին խոսելիս կարևոր է նկատել ոչ միայն նշված հանգամանքները, այլ նաև այն, որ այդ փաստաթղթով (եթե մի կողմ դնենք նրա իրավազորության հարցը) նախատեսվում էր լայն մարզային ինքնավարություն տալ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին: Եվ դա արտացոլվել է մարզի անվանման մեջ՝ Автономная область Нагорного Карабаха (АОHK): Ղարաբաղցիներից հանրաքվեի միջոցով Կավբյուրոյի որոշման վերաբերյալ համաձայնություն պոկելու ձախողված փորձերից հետո, 1923 թվականի հունիսին Բաքուն դեկրետավորեց ԼՂԽՄ-ը: Սակայն ի խախտումն Կավբյուրոյի (առանց այն էլ ապօրինի) որոշման՝ ինքնավարություն տրվեց ոչ թե Լեռնային Ղարաբաղին, այլ նրա մի մասին: Մարզի սահմաններից դուրս թողնվեցին Լեռնային Ղարաբաղի հարավային (Ֆիզուլի, Ջաբրայիլ), արևմտյան (Ղուբաթլու, Լաչին, Քելբաջար), կենտրոնական (Շահումյան, Խանլար) և հյուսիսային (Գաշքեսանի շրջանը՝ ամբողջությամբ և Շամքորի լեռնային մասերը) շրջանները: Հայկական ինքնավար մարզի անունը՝ Автономная область Нагорного Карабаха (АОHK), մինչև 1936 թվականը մնաց նույնը: Եվ միայն ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունման կապակցությամբ մարզին տրվեց նոր անուն՝ Нагорно-Карабахская Автономная область (HKAO), նման անորոշ անվանման մեջ վավերացնելու համար Լեռնային Ղարաբաղի մեծ մասի դուրս թողնելը ինքնավար մարզի սահմաններից¹⁰:

ՀԽՍՀ-ից ավելի քան 20 հազար քառ. կմ. տարածքի օտարումը՝ հոգուտ ԱդրխՍՀ-ի, խորհրդային տարիներին միանգամայն հասկանալի պատճառներով չէին դիտում որպես հայկական հողերի բռնազավթում, չնայած կատարվածը հենց բռնազավթում ու թալան էր: Այն պետք է քողարկվեր քաղաքական ու գաղափարախոսական որոշակի հիմնավորումներով ու փաստարկներով: Դրանցից առաջինն այն էր, որ Խորհրդային Ադրբեջանը հղացվել և հիմնվել է որպես հայերի ու մուսուլմանների ոչ ազգային (արտազգային – внешнеациональный) հանրապետություն, որպես սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքները մարմնավորող նոր տիպի սոցիալիստական պետություն: Եվ իրոք, ի տարբերություն մյուս բոլոր միութենական հանրապետությունների՝ ԱդրխՍՀ-ն միակ հանրապետությունն էր, որ տիտղոսակիր ազգ չունեց: Նույն այդ գաղափարը ձևակերպված էր որպես Կավբյուրոյի որոշման քաղաքական գլխավոր մոտիվ: Կենտրոնից պատրաստի բերված որոշման առաջին բառերը՝ «ելնելով մուսուլմանների ու հայերի միջև խաղաղության անհրաժեշտությունից...», հաստատումն էին այն բանի, որ հայերն ու մուսուլմաններն են Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կառուցվածքի շուրջ հակամարտող կողմերը: Այդ մասին էր վկայում նաև այն փաստը, որ Բաքվում խորհրդային իշխանություն հաստատելուց անմիջապես հետո պետաիրավական բոլոր հիմնարար փաստաթղթերը հռչակվեցին երեք լեզուներով՝ **հայերեն, քյուրքերեն և ռուսերեն**:

Փաստորեն Խորհրդային Ադրբեջանը հիմնվեց որպես **մուսուլմանների ու հա-**

10 1991-1994 թթ. իրեն պարտադրված պատերազմի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Զանրապետությունը ազատագրել է միայն մի մասը այն տարածքների, որոնք 1921 թ. պետք է ընդգրկվեին մարզի սահմաններում: Լեռնային Ղարաբաղի կենտրոնական և հյուսիսային շրջանները 1988-1991-ին հայաթափվել են, իսկ այսօր բռնազավթված են:

յերի ընդհանուր պետություն: Իրավաքաղաքական բնույթի այս գաղափարը լայնորեն արժարժվել է մամուլում, տեղ է գտել քսանական թվականների բազմաթիվ փաստաթղթերում, այդ թվում և ԼՂԻՄ-ի հիմնման մասին ղեկընտում, որտեղ Խորհրդային Ադրբեջանը բնութագրված է որպես հայերի ու մուսուլմանների «միասնական պետական միություն» (единый государственный союз¹¹): Խորհրդային Ադրբեջանն, այսպիսով, հիմնվել է ոչ թե սոսկ որպես բազմազգ, այլ իբրև ոչ ազգային (ինտերնացիոնալ) հանրապետություն: Դրանք տարբեր հասկացություններ են: Հասկանալի է դառնում, թե ինչու, ի տարբերություն մյուս բոլոր հանրապետությունների, Բաքվում կոմկուսի առաջին քարտուղարը, որը ըստ էության՝ հանրապետության առաջին քաղաքական ղեմքն էր, մինչև 1933 թիվը թուրք (կովկասյան թաթար) չի եղել, չնայած իրագործվում էր կովկասյան թաթարներից պետական ու կուսակցական կադրեր պատրաստելու քաղաքականություն, որը հայտնի էր որպես արմատականացման քաղաքականություն (политика коренизации): Այսպիսով, քաղաքական քարտեզում Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը հայտնվեց տարածքի ժողովուրդների կամքի արհամարհումով և ինքնորոշման սկզբունքի շրջանցումով: ԱդրԽՍՀ-ն կրկնեց ԱԳՀ-ի փորձն այն տարբերությամբ, որ եթե առաջինը հիմնվել էր թուրքական բանակի կողմից, ապա այս անգամ «գործը գլուխ բերեց» Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը: Սակայն ինքնորոշման ակտի շրջանցմանը այս անգամ տրվեց նաև իրավական հիմնավորում: **ԱդրԽՍՀ-ն հիմնվեց որպես ոչ ազգային, ինտերնացիոնալ հանրապետություն, որի համար ինքնորոշումը պարտադիր չպիտի դիտվեր, քանի որ այդ պետությունը չի հիմնվել որպես ազգային հանրապետություն:**

5. Հայերի ու մուսուլմանների **ընդհանուր պետության** սեփականումը ադրբեջանցի «դարձած» կովկասյան թաթարների (թուրքերի) կողմից

1930-ական թվականներին՝ այն բանից հետո, երբ կովկասյան թաթարները փոխեցին իրենց էթնոնիմը և վերցնելով հանրապետության անվանումը, «դարձան» ադրբեջանցիներ, սկսվեց **որպես ընդհանուր պետություն հիմնված** հանրապետությունը ներսից գավթելու մի շրջան: Էթնոնիմի փոփոխությունը քաղաքական ակտ էր, քանզի դրանով բազմազգ հանրապետության ժողովուրդներից մեկը մեխանիկորեն դարձավ **տիտղոսակիր ազգ** և քաղաքական առավելություններ ձեռք բերեց մյուսների նկատմամբ: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Մոսկվան դեմ չէր հանրապետության ադրբեջանականացմանը: Մարտնչող աթեիզմ որդեգրած ԽՍՀՄ-ի համար այլևս ընդունելի չէր, որ հանրապետության ազգային ղեմքը բնութագրվի «մուսուլմաններ-հայեր» կաղապարով: Խնդիր էր դրված ԽՍՀՄ բազմամիլիոնանոց մուսուլմանական համայնքը (**ունման**) մասնատել՝ նրա առանձին «կտորներից» սոցիալիստական ազգեր ձևավորելու համար: Խորհրդային Ադրբեջանում նոր ազգի ձևավորումը պետք է կատարվեր կովկասյան թաթարների հիմքի վրա: Եվ եթե մինչ այդ հանրապետության իսլամադավան

11 Դեկրետի տեքստը տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии. Т. 1, М., 2008, с. 651.

ժողովուրդներին տեղավորում էին **մուսուլմաններ** ազգային ինքնությունից զուրկ «տանիքի տակ», ապա դրանից հետո **մուսուլմանների** փոխարեն առաջարկվեց **ադրբեջանցիներ** ընդհանուր «տանիքը»: Արևելյան Անդրկովկասում ազգագոյացման նոր գործընթացներ ձեռնարկելով, Կենտրոնը միաժամանակ մի քանի նպատակ էր հետապնդում: Եվ մուսուլմանական ումմայի տրոհման խնդրից պակաս կարևոր չէին մյուս երկու նպատակները: Սկսելով ադրբեջանցու ինքնության ձևավորման գործընթացը, Մոսկվան հետամուտ էր հարմար առիթի դեպքում իրանական Ադրբեջանին հավակնելու և Մեծ Ադրբեջան ստեղծելու՝ Անկարայից պատրաստի ձևով վերցրած և 20-ականներից թղթապանակում պահվող իր նախագծին: Մյուս կողմից դա հանրապետության իսլամադավան ժողովուրդներին «նոր ազգային ինքնության» միջոցով իրանական ու թուրքական կողմնորոշումներից զերծ պահելու եղանակ էր, որի շրջանակներում Բաքվին արտոնվում էր ադրբեջանականացնել երկրամասի իսլամադավան ժողովուրդներին՝ լեզգիներին, թաթերին, թալիշներին և այլն: Այդ պատճառով **ադրբեջանցի** «դարձած» կովկասյան թաթարներին, որոնք գրավոր մշակույթի սեփական ավանդույթներ չունեին, թույլատրվեց սեփականել տեղաբնակ իսլամադավան ժողովուրդների (նրանց մեծ մասը պարսկական ծագում ունի) մշակույթը: Առանց այլևայլության ադրբեջանական հայտարարվեցին պարսկական գրականության դասականները, միջնադարի արաբ ճանապարհորդները, բնիկ ժողովուրդների պատմական հուշարձանները¹²: Մշակութային թալանին «գիտական հիմնավորում» տալու համար առաջադրվեց 8-րդ դարում պատմության թատերաբեմից իջած Կովկասյան Ալբանիայի (Աղվանքի) ցեղերի և 20-րդ դարում ձևավորվող ադրբեջանցիների՝ **քիմեռային այդ էթնոսի**,¹³ «ժառանգական կապի» մասին հնարածին տեսությունը, և այդ «հիմքով» սկսվեց Հայոց Արևելից կողմանց միջնադարյան գրական հուշարձանների զավթումը (իբր՝ դրանք սկզբում եղել են աղվանական, հետո թարգմանվել են հայ վանականների կողմից, իսկ բնագրերը իբր ոչնչացվել են):

«Նոր ազգի» ձևավորման տենդագին քաղաքականության հունում հանրապետության հայությունը դարձավ մշակութային ցեղասպանության հիմնական թիրախը: Ամենից աղաղակող փաստն այս առումով հայկական խաչքարերի՝ միջնադարյան հայկական ճարտարապետական արվեստի այդ ինքնատիպ հուշարձանների, սեփականման փորձն էր: Խաչքարերի՝ հայկական ճարտարապետական մշակութային ժառանգությանը պատկանելու հանգամանքը կասկածի չի ենթարկվել տարածաշրջանի մշակույթի պատմության բոլոր մասնագետների կողմից և նույնիսկ որևէ ապացուցման կարիք չի ունեցել: Ուստի տեսնելով, որ չի հաջողվում ապացուցել հակառակը, Բաքուն սկսեց ոչնչացնել դրանք: Խաչքարերի բարբարոսական ոչնչացման միջազգային արձագանքներ գտած վերջին փաստերից մեկը Հին Ջուղայի (Նախիջևան) հայկական գերեզմանոցի խաչքարերի զանգվածային ջարդն էր 2005 թվականի դեկտեմբերին: Ի վերջո այս հանցագործության քննության գործն ավարտվեց նրանով, որ բարձրացված հարցի կապակցությամբ Բաքուն արգելեց եվրոպական մասնագետների մուտքը Նախիջևան:

12 Ավելի մանրամասն տե՛ս Գ. Асатрян, Н.Геворкян., Азербайджан: принцип присвоения и иранский мир. Ереван, 1990.

13 Այս արտահայտությունը վերցված է Ռահման Բադալովի հոդվածից, տե՛ս Рахман Бадалов: Город и страна // Азербайджан и Россия: общества и государства, М., 2001, с. 271.

Վերադառնալով անցյալին, նկատենք, որ այնուամենայնիվ, Մոսկվան և Բաքուն տարբեր կերպ էին նայում «ադրբեջանական ազգի» ձևավորման գործընթացին: Բաքվում կուսակցական և պետական իշխանության լծակները իրենց ձեռքը վերցրած թուրքամետ խավը հանրապետության ադրբեջանականացմանը աշխատում էր տալ թուրքացման բնույթ: Սակայն Մոսկվան հանգիստ հետևում էր զարգացումներին՝ դրանում տեսնելով անխուսափելի ռուսիֆիկացման (ռուսակա-նացման) հեռանկարը: Եվ իրոք, թուրքացումից խուսափող բնիկ ժողովուրդները նախընտրում էին իրենց երեխաներին տալ ռուսական կրթություն: Նույն կերպ էին վարվում քաղաքաբնակ հայերը (Բաքվի հայերի 25 տոկոսը 1989 թվականին իր մայրենի լեզուն համարում էր ռուսերենը): Բաքուն դառնում էր ռուսիֆիկացման այն գլխավոր ձուլարանը, որտեղ ապագային միջավայրում ձևավորվում էր մի նոր ռուսախոս հանրություն՝ **բաքվեցու** «ինքնությամբ»: Այլ էր դրությունը գյուղական շրջաններում, որտեղ չէր հասնում ռուսիֆիկացիայի ալիքը: Իրենց ազգային-համայնքային միջավայրում ապրող, տանը սեփական լեզուն և սեփական ավանդույթները պահպանող բնիկները իրականում չէին դառնում ադրբեջանցի, չնայած ավարտում էին ադրբեջանական դպրոց և ստանում ադրբեջանցու անձնագիր: Եթե հավատալու լինենք պաշտոնական վիճակագրությանը, խորհրդային տարիներին հանրապետության բոլոր բնիկ մահմեդական ժողովուրդները ձուլվել դարձել էին ադրբեջանցիներ, քանի որ 1988-ին նրանք բոլորը անհետացել էին հանրապետության էթնիկական քարտեզից: Իրականում ադրբեջանականացումը նրանց համար ըստ էության վերածվել էր յուրօրինակ ազգային ընդհատակի, որտեղ այդ ժողովուրդների մեծ մասը մինչ օրս պահպանում է իր ինքնությունը: Հետխորհրդային տարիներին, հուսալով, որ «եվրոպական հսկողության» տակ գտնվող Ադրբեջանը այևս վտանգավոր չէ, նրանց մի մասը դուրս եկավ այդ ընդհատակից: Այսպես՝ եթե 1926 թվականի մարդահամարով ԱդրբՄՀ-ում բնակվում էր 77,3 հազար թալիշ (ամբողջ բնակչության 3,3 տոկոսը), ապա 1939 թվականին արդեն այդ թիվը նվազել էր մինչև 3,0 հազարը: Մինչդեռ 1989 թվականին վիճակագրությունը փաստեց այլ թիվ՝ 21,0 հազար, իսկ ահա 1999-ին պարզվեց, որ ընդամենը 10 տարվա ընթացքում այդ թիվը քառապատկվել է:¹⁴ Թվերի այս ակնհայտ վայրիվերումների ետևում դժվար չէ տեսնել այն բռնությունները, որոնց ենթարկվել են թալիշները Խորհրդային Ադրբեջանում: Նույնն է պատկերը լեզգիների, թաթերի, քրդերի և «ազգային փոքրամասնությունների» սյունյակում հայտնված երկրամասի պատմական տերերը հանդիսացող մյուս ժողովուրդների դեպքում: Խորհրդային վերջին տարիներին թվում էր, թե **ադրբեջանցի** հորջորջվող «նոր ազգի» ձևավորումը ավարտված է: Բայց 1988-1991 թվականներին զանգվածային ջարդերով հայերին դուրս մղելուց հետո պարզվեց, որ ո՛չ միասնական անձնագիրը, ո՛չ պարտադրված լեզուն չեն լուծել հանրապետության ադրբեջանականացման (իրականում՝ թուրքացման) խնդիրը: «Կարծես թե վերջնականապես գտնված ինքնությունը (էթնոնիմ, լինգվոնիմ) հանկարծ աչքի առջև սկսեց նաևնատվել տարածաշրջանային բաղադրիչներով և «թյուրքեր»-«ոչ թյուրքեր» սահմանազատման գծով»¹⁵:

14 St'u Расим Мусабеков, Становление независимого азербайджанского государства и этнические меньшинства // Азербайджан и Россия: общества и государства, М. 2001, с.350.

15 Рахман Бадалов, Город и страна // Азербайджан и Россия: общества и государства, М. 2001, с. 274.

Նպատակահարմար ենք գտնում մեջբերել Ռ. Բաղալովի դիտարկումը. «Казалось бы, окончательная найденная идентичность (этноним, лингвоним) вдруг на глазах начала расклевываться на региональные

Ներկայումս ինքնության ճգնաժամը Ադրբեջանում մտնում է նոր փուլ: Պաշտոնական Բաքուն փորձում է ամրապնդել «ազգային միասնությունը» հայկական վտանգի մասին առասպելներով: Դրանում պետք է տեսնել Ադրբեջանում մոլեզունդ (և Եվրոպայի կողմից անտեսվող) հակահայկական հիստերիայի շարժառիթներից մեկը:

Խորհրդային տարիներին թուրքացման աղացում հայտնված Արևելյան Անդրկովկասի բնիկ իսլամադավան ժողովուրդների համեմատությամբ հայերի վիճակն ավելի անտանելի էր: Արևելյան Անդրկովկասի հայությունն էր խորհրդային տարիներին դարձել ԱդրԽՍՀ թուրքացման հիմնական արգելքը և բռնությունների գլխավոր թիրախը: Հավատքի, լեզվի, մշակույթի տարբերությունները այնքան խորն էին, որ հայերին հնարավոր չէր ներքաշել ադրբեջանականացման հորձանուտը: Խառն ամուսնություններով և ռուսիֆիկացմամբ Բաքվում ազգային դիմագիծը ինչ-որ տեղ կորցրած հայեր՝ սրանք էին ազգային համայնքից արտահոսքի երկու ելքերը: Այդքանով հանդերձ ադրբեջանահայությունը իր հիմնական զանգվածով մնում էր տեղում պատմական գրանցում ունեցող այն հանրույթը, որը պայմանավորում էր էթնոքաղաքական սահմանազատման գլխավոր գիծը:

Հիշենք, որ Կավբյուրոն դեռևս 1921 թվականին հիմնական էթնոքաղաքական բաժանարար գիծը սահմանել էր՝ «ելնելով մուսուլմանների ու հայերի միջև խաղաղության հաստատման անհրաժեշտությունից» բանաձևումից: Հատկանշական է, որ 1988-ի հունիսի 13-ին ԱդրԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, ԼՂԻՄ-ի՝ ՀԽՍՀ հետ վերամիավորվելու խնդրանքը մերժելով, մատնանշեց էթնոքաղաքական սահմանազատման նույն գիծը: Մարզի խնդրանքը անընդունելի համարվեց, «քանի որ նրա իրագործումը հակասում է **հանրապետության** (ընդգծումը մերն է-Ա.Մ.) ադրբեջանցի և հայ ազգաբնակչության շահերին»¹⁶: **Մուսուլմանները** 1988-ին փոխարինվեց **ադրբեջանցիներով**, սակայն ձևակերպման մեջ անփոփոխ մնաց Խորհրդային Ադրբեջանի ձևավորման քաղաքական ելակետը, ըստ որի ԱդրԽՍՀ-ն հիմնված է որպես երկու գլխավոր համայնքների **միասնական պետական միություն**: Երկու օր հետո ԱդրԽՍՀ Գերագույն խորհուրդը խմբագրեց ընդունած որոշումը՝ այս անգամ մերժումը «հիմնավորելով» այն փաստարկով, որ մարզի վերամիավորումը ՀԽՍՀ հետ «հակասում է **մարզի** (ընդգծումը մերն է, և այս ձևակերպումը ցույց է տալիս, որ հանրապետության փոխարեն առաջին պլան մղվեց մարզը - Ա.Մ.) ու հանրապետության ադրբեջանցի ու հայ ազգաբնակչության, այլ ազգերի ու ազգությունների շահերին...»¹⁷: Դա պրոբլեմը աշխարհագրորեն նեղացնելու և ինտերնացիոնալ հանրապետությունը «հայերից պոկելու» կամ հայերին «հանրապետությունից պոկելու» առաջին քայլն էր վերաբորբոքված հակամարտության համատեքստում, որի հեռահար նպատակը ցեղասպանության ենթարկված ադրբեջանահայությանը խնդրի կերպարից դուրս թողնելն էր:

Բայց այս քաղաքականությունը ևս նորություն չէր: Արդեն իսկ 1930-ական թվականներից էր ԱդրԽՍՀ հայությունը դարձել հանրապետության թուրքացման գլխավոր ընդդիմախոսն ու արգելքը: Բաքվում քաղաքական իշխանությունը իր ձեռքը հավաքած կովկասյան թաթարը, որի համար **ադրբեջանցի** էթնոնիմը իր

составляющие и по демаркации «тюрки» - «не тюрки».
16 Տե՛ս «Бакинский рабочий», газета, 14 июня 1988 г.
17 Տե՛ս նույն տեղում:

թուրքական ինքնությունը քողարկելու միջոց էր միայն, 1930-ականներից մինչև 1988-ը հանրապետությունից հայերին դուրս մղելու քաղաքականությունը տարել է ամենատարբեր ձևերով՝ նուրբ պրեսինգից մինչև ազգայնականության մեջ կեղծ մեղադրանքներով հալածանքները, տնտեսական ճնշումներից մինչև անհիմն քրեական մեղադրանքները, չբացահայտված կամ անպատիժ մնացած սպանություններից մինչև մշակութային թալանը: Երկրորդ աշխարհամարտից հետո այս քաղաքականությունը լրացվեց հանրապետության հայկական շրջանների և առաջին հերթին Արցախի նկատմամբ կիրառվող ժողովրդագրական էքսպանսիայի քաղաքականությամբ: Հայկական շրջաններում հիմնվում էին նոր աղբբեջանական գյուղեր, հայկական գյուղական տնտեսություններից խլվում էին հողատարածքներ, պարտադրվում աղբբեջանցի մասնագետներ: Այդ բոլորը քողարկվում էր ժողովուրդների լեցինյան բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին լռուցանելով: Խորհրդային տարիներին աղբբեջանահայության նկատմամբ ռասիզմի բնույթ ընդունած և սուվգայիթյան եղեռնի վերաճած քաղաքականությունը դեռ սպասում է իր ուսումնասիրությանը: Միայն մեկ փաստ. Նախիջևանը, որը 1921 թ. հանձնվել էր ԱդրԽՍՀ **հովանավորությանը** (բառը ընդգծվում է՝ ցույց տալու համար այն բարոյական պատասխանատվությունը, որ Բաքուն պիտի ունենար երկրամասի հայության նկատմամբ), 1988-ին, մինչև սուվգայիթյան եղեռնը, արդեն գրեթե հայաթափված էր: 20-րդ դարի պատմությունը չգիտի նման այլ օրինակ. **հովանավորության հանձնված տարածքում** էթնիկական գտում իրագործվեց հենց նրա կողմից, ում հովանավորությանը տրվել է այն: Եվ դա՝ մինչև դարաբաղյան դեպքերը:

Հայերը բազմիցս ընդվզել են ԱդրԽՍՀ-ում իրագործվող ագրեսիվ-ազգայնական քաղաքականության դեմ: 1987-ին կազմակերպվեց նոր զանգվածային ստորագրահավաք՝ հուսով, որ երկրում հռչակված **գլաստնոստի** նոր քաղաքական ուղեգիծը կարող է հարցի արդարացի լուծման հնարավորություն ընձեռել: Պահանջագրի տակ դրվեց 80 հազար ստորագրություն: Դա ըստ էության հանրաքվե էր, որի արդյունքները Մոսկվա տարան մարզի ամենահեղինակավոր ու ճանաչված մարդիկ: Մեկը մյուսի ետևից Մոսկվա այցելող ժողովրդական պատվիրակներին այնտեղ հյուրընկալորեն ընդունում, ըմբռնումով լսում և հուսադրելով ճանապարհում էին: Այսպես է հասունացել 1988-ին փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նիստը, որը մարզը ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցը քննարկելու և դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց ԱդրԽՍՀ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններին¹⁸:

Քաղաքակիրթ այդ խնդրանքի պատասխանը սուվգայիթյան ցեղասպանությունն էր: Մի քանի օր սաղրիչ հակահայկական ելույթներով զազազեցված ամբոխին մղեցին դեպի հայերի բնակարանները, որոնցում հեռախոսները անջատված էին, իսկ բակերում նախապես արդեն քարեր ու մետաղյա ձողեր էին թափված: **Աղբբեջանցիները իրենց բնակարաններում լույսերը հանգցրել էին, որպեսզի ջարդարարները հեշտ հայտնաբերեն հայերի տները:** Ելումուտը փակած քաղաքում սկսվեց խոշտանգումների, բռնաբարումների, ողջակիզումների բարբարոսական մի խնջույք: Ուշացումով քաղաք մտած գորքը վճռական գործողությունների հրաման չստացավ և դարձավ վայրագությունների դիտորդը: Ստեփանակերտից հարյուրավոր կիլոմետրեր հեռավորություն վրա ապրող, դա-

18 Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», օրաթերթ, 21 փետրվարի, 1988:

րաբաղյան խնդրի հետ ոչ մի առնչություն չունեցող անմեղ մարդիկ դաժանաբար խոշտանգվեցին ու սպանվեցին միայն այն բանի համար, որ հայ են: Սումգայիթյան սպանողով Բաքուն փոխեց խնդրի բնույթը: **Միութենական հանրապետության և ինքնավար մարզի միջև ծագած կոնֆլիկտը դարձավ հանրապետության երկու հիմնադիր ժողովուրդների կոնֆլիկտ:** Սումգայիթը ծայրահեղորեն սրեց հարցը: Այլևս պարզ էր, որ Բաքուն միայն ջարդերն է դիտում որպես ծագած հարցերի լուծման միջոց: Մինչև 1991-ը, երբ ԽՍՀՄ-ը մոտեցավ իր լուծարման վերջնագծին, զանգվածային բռնություններով ու կոտորածներով փաստորեն գրեթե ողջ Ադրբեյջանը հայաթափված էր: Դա նույն ավանդական-թուրքական քաղաքականության գծի վրա կատարված հանցագործություն էր՝ իրագործված իրեն աղորբեջանցի անվանող, նույն՝ թուրքի կողմից:

6. Ժողովուրդների ազատ ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները ԽՍՀՄ լուծարման համատեքստում

1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը ընդունեց ԼՂԻՄ-ում հատուկ կառավարում մտցնելու մասին որոշում, որով մարզի քաղաքական ու պետական բոլոր հաստատությունները, ձեռնարկություններն ու հիմնարկները, արհմիությունները, ստեղծագործական միությունները դրվեցին Ռուսաստանի կամ Հայաստանի ենթակայության տակ: Դրա հետ մեկտեղ կատարվեց Ժողպատգամավորների մարզային խորհրդի գործունեությունը: Մարզի քաղաքական շրջանակները ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործունեության կատարումը որակեցին որպես ԽՍՀՄ Սահմանադրության խախտում և 1918 թվականի փորձով հրավիրեցին ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար, որն իր վրա վերցրեց մարզխորհրդի գործառույթները: **Դա եզակի դեպք էր ԽՍՀՄ պատմության մեջ այն իմաստով, որ բարձրագույն իշխանությունները խախտում էին սահմանադրական կարգը, իսկ տեղական ընտրախավը վերականգնում էր այն:**

1989 թ. նոյեմբերի 28-ին Հատուկ կառավարումը մարզում վերացվեց, որին ի պատասխան ղեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և ԼՂԻՄ Ազգային խորհուրդը **համատեղ ճիստով** հռչակեցին ՀԽՍՀ և ԼՂԻՄ վերամիավորումը: **Միացումը** միջազգային իրավունքի տեսակետից անբասիր էր: Մակայն Մոսկվան չընդունեց այդ ակտի օրինականությունը, պատճառաբանելով, թե այն հակասում է ԽՍՀՄ Սահմանադրության 78 հոդվածին, ըստ որի միութենական հանրապետության սահմանները չեն կարող փոփոխվել առանց նրա համաձայնության, հակառակ այն բանին, որ մինչ այդ նման վերանենթարկումների մեկ տասնյակից ավելի դեպք էր արձանագրվել: Այսպես թե այնպես, 1989 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ըստ էության մարզը դե-ֆակտո դուրս բերվեց Ադրբեյջան ենթակայությունից¹⁹:

Ղարաբաղյան խնդիրը (և ընդհանրապես համանման խնդիրները) սահմանադրական փակուղուց դուրս բերելու համար 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունեց «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության

Բ (Ը) ԳԿԻԻԲ, ԹԻՎ 4 (32) ԽՈԿԿՐԵՄԵՆԻՐ-ՂԵԿԿՐԵՄԵՆԻՐ 2010

ՎԵՄ համահայկեական համդես

19 Երբ 1991-ին ԽՍՀՄ-ը դադարեց գոյություն ունենալ, պարզվեց, որ հատուկ կառավարումը, որի ընթացքում մարզը դե-ֆակտո դուրս է բերվել Ադրբեյջան ենթակայությունից, ժամանակագրորեն եղել է ԽՍՀՄ տարիներին մարզի վերջին կարգավիճակը:

դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը²⁰, որն արտոնում էր ինքնավար կազմավորումների՝ միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշել իրենց իրավական կարգավիճակը՝ հեռանալ հեռացող հանրապետության հետ, մնալ ԽՍՀՄ կազմում կամ հիմնել անկախ պետություն: Կենտրոնը դրանով իբր մտադիր էր կանխել ԽՍՀՄ լուծարումը: Մի շարք հանրապետություններ իրենց կազմում ինքնավարություններ ունեին, և օրենքի ընդունման քաղաքական մոտիվները հիմնված էին այն հաշվարկի վրա, որ տարածքներ կորցնելու վտանգի տակ նրանք չէին լքի ԽՍՀՄ-ը: Իրականում օրենքը արագացրեց ԽՍՀՄ լուծարումը, քանի որ այն արգելք չէր այն հանրապետությունների համար, որոնք այդպիսի կազմավորումներ չունեին: Նրանք էլ առաջինները լքեցին ԽՍՀՄ-ը՝ երկրի լուծարումը դնելով անշրջելի ընթացքի մեջ, իսկ մյուսները որոշ ժամանակ հապաղեցին:

Այսպես թե այնպես, ԽՍՀՄ լուծարման հիմնական «իրավական գլխացավանքը», ինչպես պարզվեց, կապված էր 1990թ. ապրիլի 3-ի օրենքի հետ: Այն կարող էր անկանխատեսելի դարձնել լուծարման գործընթացը: Միջուկային վիթխարի գերտերության անկառավարելի փլուզումը հղի էր գորբալ վտանգներով: ԱՄՆ-ը և Եվրոպան ակնդետ հետևում էին ԽՍՀՄ-ում ծավալվող գործընթացներին: ԽՍՀՄ լուծարմամբ շահագրգիռ Արևմուտքը միաժամանակ գիտակցում էր ապրիլի 3-ի օրենքի հետ կապված Ռուսաստանի մտահոգությունները: Արևմուտքի տեսակետից վատթարագույնը կլիներ այն, որ «ռուսական արջը» արթնանա և վճռական քայլերի դիմի՝ ԽՍՀՄ լուծարումը վիժեցնելու համար: Ահա թե ինչու Վաշինգտոնում որոշեցին ԽՍՀՄ տրոհման գործընթացների վերջնագծում անտեսել 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը, բայց հասկացրին Մոսկվային, որ Արևմուտքը բոլոր հնարավոր սցենարներում պաշտպանելու է Ռուսաստանյան Ֆեդերացիայի տարածքային ամբողջականությունը (Ռուսաստանի Ֆեդերացիան, որ տասնյակ ինքնավարություններ ուներ իր կազմում, ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու որոշում ընդհանրապես չընդունեց, և 1991-ի վերջնագծին, Ուկրաինայի ու Բելոռուսի հետ մեկտեղ հիմնեց ԱՊՀ-ն): Այսպես որդեգրվեց ԽՍՀՄ-ը ըստ միութենական հանրապետությունների տրոհելու բանաձևը: Խորհրդային միութենական հանրապետությունների մայրաքաղաքները, ի թիվս որոնց՝ Բաքուն ու Երևանը, տեղեկացված էին այդ մասին ավելի շուտ՝ նախքան ԱՄՆ պետքարտուղար Բեյկերը 1991-ի նոյեմբերին անդրկովկասյան հանրապետություններ կատարած այցի ժամանակ կիրապարակեր ԽՍՀՄ տրոհման արևմտյան բանաձևը: Արդեն 1991-ի ամռանը հայտնի էր, որ հետխորհրդային տարածքում նոր պետությունները ճանաչվելու են միութենական հանրապետությունների սահմաններում:

Մրանով ԱՄՆ-ը և Եվրոպան, որոնք 1988-1990 թթ. սատարում էին Ղարաբաղյան շարժմանը և հորդորում Մ. Գորբաչովին՝ գտնել խնդրի այնպիսի լուծում, որն իրապես «կարտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները» (արտահայտությունը վերցված է 1989 թ. նոյեմբերին ԱՄՆ Կոնգրեսի ընդունած բանաձևից)²¹, կտրուկ փոխեցին դիրքորոշումը: Այդ մասին տեղեկացված Բաքուն կարող էր ավելի վստահ ընդունել ԽՍՀՄ-ից դուրս գալու որոշում, ինչը և նա արեց 1991թ. օգոստոս-

20 Տե՛ս «Свод законов СССР», т. 1, 1990, стр. 44-46; Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990, N 15, с. 252.

21 Տե՛ս «Коммунист», Ереван, 23 ноября 1989 г.

սի 30-ի «Անկախ պետականության վերականգման մասին»²² հռչակագրով: Այդ ակտով Բաքվում փաստորեն հրաժարվեցին ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնեցին թուրքական բանակի կողմից հիմնված և առանց սահմաններ ձեռք բերելու պատմության բեմը լքած՝ ԱԳՀ պետականությունը, որի կազմում ոչ Նախիջևան է եղել, ոչ էլ՝ Լեռնային Ղարաբաղ: Հոկտեմբերի 18-ին Բաքվում ընդունվեց և նոյեմբերի 7-ին հրապարակվեց «Պետական անկախության մասին» Սահմանադրական ակտ, որով ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարումը ստացավ օրենսդրական բնույթ՝ ծավալուն տեքստով և հստակ ձևակերպումներով: Ակտը Ադրբեջանի խորհրդայնացումը որակեց որպես Խորհրդային Ռուսաստանի կողմից Ադրբեջանի բռնազավթում²³:

Օգոստոսի 30-ին Բաքվում ընդունված «Անկախ պետականության վերականգման մասին» հռչակագիրը ըստ էության ԱդրԽՍՀ-ի ԽՍՀՄ-ից դուրս գալու հռչակագիր էր: 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի և հարակից Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների ժողպատգամավորների նիստը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)՝ որպես ԽՍՀՄ լուծարման արդյունքում ձևավորված նոր պետություն:

Դա միջազգային իրավունքի և լուծարվող երկրի՝ ԽՍՀՄ օրենսդրության տեսակետից անբասիր ու անխոցելի ինքնորոշման ակտ էր: Դրանով այն հարցը, թե ԽՍՀՄ լուծարման ընթացքում ո՞ր միութենական հանրապետությունից էր դուրս գալիս Լեռնային Ղարաբաղը՝ ՀԽՍՀ-ի՞ց, որի հետ մարզը վերամիավորվել էր 1989 թ. դեկտեմբերի 1-ին, թե՞ ԱդրԽՍՀ-ից, որի սահմաններ այն մտցվել էր 1921 թ. Կավբյուրոյի որոշմամբ, կորցնում էր իր իրավական նշանակությունը, քանի որ ԼՂՀ-ն իրավունք ուներ դուրս գալու թե՛ մեկի, թե՛ մյուսի կազմից:

Ակնհայտ է, որ ԼՂՀ անկախացման դեմ հնարավոր չէ առաջադրել իրավական որևէ հակափաստարկ: Ընդդեմ ԼՂՀ միակ փաստարկը քաղաքական բնույթի է, և դա այն է, որ խոշոր տերությունները 1991-ին որոշել են նորանկախ Ադրբեջանական Հանրապետությունը ճանաչել իրեն իրավաբանորեն չպատկանող Լեռնային Ղարաբաղով ու Նախիջևանով: Դրանով Արևմուտքը Լեռնային Ղարաբաղի ժողովրդին «առաջարկեց» նորից ինքնորոշվել՝ այս անգամ անջատվելու համար մի պետությունից, որի տարածքային ամբողջականությունը ինքը ճանաչել է: Հիմնախնդրի կերպարից տառացիորեն ջնջվեց այն փաստը, որ **Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը ճանաչվել է մի քանի անգամ: 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքուն այն ճանաչել է հատուկ հռչակագրով: 1923-ին ԼՂԻՄ-ը հիմնվել է որպես խորհրդային տիպի պետականություն՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդեն ճանաչված այդ իրավունքի հիմքի վրա, իսկ 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքը վերահաստատել է այդ իրավունքը:**

Հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները նախկին միութենական հանրապետությունների սահմաններում ճանաչելու Արևմուտքի կողմից ընդունած **քաղաքական որոշումը** մինչ օրս արգելափակում է Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթի ձևավորմանը: Ամտեսելով, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը ճանաչված է մի քանի անգամ, ԵԱՀԿ-ն խնդիրը տեղափոխել է տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքների՝ հակամարտության փաստական կոնկրետությունից կտրված տե-

22 Տե՛ս «Бакинский рабочий», 3 сентября 1991 г.
 23 Տե՛ս «Бакинский рабочий», 7 ноября 1991 г.

սական-վերացական «հակասությանների» դաշտ:

Արդեն անդրադարձել ենք 1918 թ. թուրքական բանակի կողմից Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության և 1920 թվականին ռուսական 11-րդ Կարմիր բանակի կողմից Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության հիմնման փաստերին: Երկու դեպքում էլ պետություն է հռչակվել դրսից՝ ինքնորոշման օրինական ակտի շրջանցումով: Ինքնորոշման շրջանցումով «կայացավ» նաև մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը: Խոսքը միայն այն մասին չէ, որ 1991-ի դեկտեմբերի 10-ին ԼՂՀ բնակչությունը՝ իր արդեն իսկ ճանաչված ինքնորոշման իրավունքի հիման վրա և միջազգային դիտորդների ներկայությամբ տեղի ունեցած հանրաքվեով՝ օրինական «անձնագիր էր տվել» սեպտեմբերի 2-ին հռչակված Արցախի անկախ հանրապետությանը և չէր մասնակցել Ադրբեջանական Հանրապետության անկախության մասին դեկտեմբերի 15-ի հանրաքվեին: Գոյություն ունեւր ավելի գորեղ իրավական արգելք: Բանն այն է, որ Բաքուն իրավունք չունեւր ինքնորոշման հանրաքվեին մասնակից դարձնել ո՛չ Լեռնային Ղարաբաղի, ո՛չ էլ Նախիջևանի ազգաբնակչությանը: ԼՂ-ի բնակչությունը արդեն կայացրել էր իր որոշումը, իսկ Նախիջևանը որպես հովանավորության (խնամակալության) հանձնված երկրամաս, համաձայն Կարսի գործող բազմակողմ պայմանագրի, չէր կարող դիտվել Ադրբեջանական Հանրապետության տարածք: Ադրբեջանի ինքնիշխանության մասին հանրաքվեին Նախիջևանը չէր էլ կարող մասնակցել:

Ներկայումս ԵԱՀԿ-ն ելնում է հիմնախնդրի իրավական փաթեթի հետ ոչ մի կապ չունեցող այն կանխավարկածից, թե Ադրբեջանական Հանրապետության սահմանները լեգիտիւմ են: Այնինչ՝ խնդրի կարգավորումը իրավական հարթություն տեղափոխելու դեպքում դժվար չէ պարզել, որ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը չէր կարող անկախություն ձեռք բերել ԱդրԽՍՀ սահմաններում: **Նախկին ԱդրԽՍՀ-ը եղել է միակը միութենական հանրապետությունների շարքում, որի սահմանները մտցված տարածքների վերաբերյալ կան գործող բազմակողմ միջպետական պայմանագրեր, որոնք արգելում են Ադրբեջանական Հանրապետությանը դրանք հռչակել որպես իր սուվերեն տարածքներ:** Ինչպես նշվեց, այդպիսին է Կարսի մինչ օրս գործող պայմանագիրը, որով Նախիջևանը տրվել է Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը, այլ ոչ թե սուվերենությանը: Պարզվում է սակայն, որ հիմնախնդրի իրավական փաթեթը Բաքվին այսօր գրկում է նաև Նախիջևանը որպես հովանավորյալ տարածք ունենալու իրավունքից: Դա բխում է մերօրյա Ադրբեջանական Հանրապետության կողմից ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու և թուրքական բանակի կողմից հիմնած ու 1918-1920 թթ. գոյատևած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը վերականգնելու մասին 1991 թ. ընդունած ակտերից:

Այսինքն՝ Բաքվում վերականգնել են մի պետականություն, որի կազմում ո՛չ Լեռնային Ղարաբաղը և ո՛չ էլ Նախիջևանն են եղել: Վերականգնվել է մի պետականություն, որ հաստատված կամ միջազգայնորեն ճանաչված սահմաններ չի ունեցել: Իրավական այդ հանգամանքները 1991-ին Բաքվին գրկել են Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հետ ունեցած այն կապերից, որոնք առանց այն էլ ապօրինի գործարքների արդյունք էին:

ԽՍՀՄ կազմից դուրս գալու և ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու 1991-ի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Բաքվում ընդունած ակտերից բխում

են սկզբունքային բնույթի իրավական հետևյալ հետևանքները: Առաջին՝ 1991-ին, մինչև մերօրյա Ադրբեջանական Հանրապետության միջազգային ճանաչումը (այն ՄԱԿ է ընդունվել 1992-ի մարտին), Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իր անկախությունը հռչակել է նրան չպատկանող տարածքներում: Երկրորդ՝ 1991-1994 թթ. իրեն պարտադրված պատերազմի ընթացքում ԼՂՀ-ն ազատագրել է այն տարածքների մի մասը միայն, որոնք 1921 թվականին ապօրինաբար օտարվել են Սովետական Հայաստանից, իսկ 1923-ին՝ Կավբյուրոյի որոշման խախտումով դուրս են թողնվել ԼՂԻՄ սահմաններից: ԼՂՀ-ն Ադրբեջանական Հանրապետությանը իրավաբանորեն պատկանող, այսպես կոչված՝ օկուպացված տարածքներ չի վերահսկում: Ընդհակառակը՝ Լեռնային Ղարաբաղի կենտրոնական ու հյուսիսային շրջանները, որոնք մաս պիտի կազմեին ԼՂԻՄ-ի, ինչպես նաև Նախիջևանը, ցայժմ մնում են Բաքվի ապօրինի վերահսկողության տակ:

Մեր քննարկած հարցի ենթատեքստում հատուկ ընդգծման կարիք ունի արևմտյան իրավաբանաբանական արժեքների հետ աղաղակող հակասության մեջ գտնվող այն արտառոց փաստը, որ 1991-ին Արևմուտքը, ի դեմս Ադրբեջանական Հանրապետության, ճանաչել է մի պետություն, որը վերականգնելով սահմաններ ձեռք չբերած ԱՂՀ պետականությունը, 1991-ին սահմաններ չհռչակեց, մի պետություն, որտեղ երբևիցե ինքնորոշման օրինական ակտ չի իրականացվել: Այստեղ պետք է փնտրել այն բանի բացատրությունը, որ մինչ օրս ԵԱՀԿ Մինսկի խմբում, որտեղ ընթանում են Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության կարգավորման բանակցությունները, սեղանին չեն դնում հիմնախնդրի իրավական փաթեթի փաստաթղթերը: Հասկանալի է դառնում նաև այն, թե ինչու ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները գործադրվում են հիմնախնդրի կոնկրետ իրավական փաստերից ու փաստաթղթերից կտրված:

Հիմնախնդրի կոնկրետ փաստերից կտրված ինքնորոշման սկզբունքը առաջադրվում է որպես հակամարտության կարգավորման «իրավական հիմք» այն փաստի անտեսումով, որ ԼՂ ժողովրդի այդ իրավունքը ճանաչված է մի քանի անգամ, և որ ԼՂ ժողովուրդը Ադրբեջանական Հանրապետությունից անջատվելու խնդիր չունի, քանի որ ինքն իր պետականությունը հիմնել է նրան չպատկանող տարածքներում:

Չուզահեռաբար՝ տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները առաջադրվում են որպես հակամարտության կարգավորման հիմք, անտեսելով այն փաստը, որ դրանք կիրառելի չեն Ադրբեջանական Հանրապետության նկատմամբ: Անտեսվում է, որ մարզը Բաքվի ենթակայությունից դե-ֆակտո դուրս է բերվել դեռևս 1989 թվականին, երբ այնտեղ մտցվել է Հատուկ կառավարման կարգավիճակ: Վերջապես անտեսվում է ադրբեջանահայությանը հազարամյա բնակության իր վայրերից զանգվածային ջարդերով դուրս մղելու, նրան ցեղասպանելու անհերքելի իրողությունը:

Վերը շարադրված անվիճելի փաստերից էլ բխում է իրավաբանաբանական բնույթի գլխավոր եզրակացությունը՝ **ինքնորոշման ու տարածքային ամբողջականության տեսակետից մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը ապօրինի գոյակցություն է: Նույն սկզբունքների տեսակետից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է բացառիկ օրինական ձևով:**

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ինքնորոշ-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

10
Բ (Ը) ԳՊՐԻ, ԹԻՎ 4 (32) ԽՈԿԵՐՆԵՐ-ՂԵԿԵՆԵՐ

ԿԵՄ ԽԱՆՈՒՄԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ

ման և տարածքային ամբողջականության սկզբունքների ոչ համարժեք գործադրումը այդ սկզբունքները այլասերելու, դրանք տարածքային զավթումների ու ցեղասպանության քողարկման գործիքներ դարձնելու նախադեպ է: Եվ դրանում է այս նախադեպի գլոբալ վտանգը: Սա հատուկ քննարկման հարց է, բայց անկասկած է, որ այն, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղի շուրջ, համատեղելի չէ եվրոպական քաղաքակրթության իդեալների հետ:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում ժողովուրդների ազատ ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների կիրառությունը սովորաբար կապում են ԼՂՀ ճանաչման, նրա կայացման լեգիտիմության հարցերի հետ: Միաժամանակ ԽՍՀՄ լուծարումից հետո ձևավորված ավանդույթով իբրև «ի վերուստ տրված» և կասկածից դուրս մի բան է դիտվում, թե իբր՝ Ադրբեջանական Հանրապետությունը բավարարում է միջազգային իրավունքի այդ սկզբունքներին: Սակայն հարցի քննությունը պարզում է, որ 1918 թվականից ի վեր Այսրկովկասում «Ադրբեջան» անունով հայտնված պետական երեք կազմավորումներն էլ հիմնվել են ինքնորոշման ու տարածքային ամբողջականության՝ միջազգային իրավունքի այդ հիմնարար սկզբունքների շրջանցումով կամ խախտումով: 1918 թ. Ադրբեջանական Գեմոկրատական Հանրապետությունը (ԱԳՀ) հիմնել է թուրքական կանոնավոր բանակը առանց ինքնորոշման սկզբունքի կիրառության: 1920 թ. Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը տապալել է թուրքական բանակի կողմից հիմնած ԱԳՀ-ն և հիմնել է Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ԱդրԽՍՀ), և ինքնորոշման սկզբունքը դարձյալ չի կիրառվել: Այս անգամ այն շրջանցվել է նաև այն հիմնավորումով, որ ԱդրԽՍՀ-ը հիմնվել է որպես ոչ ազգային, ինտերնացիոնալ հանրապետություն: Նորանկախ Ադրբեջանական Հանրապետությունը ևս 1991-ին ասպարեզ մտավ տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքների խախտումով ոչ միայն այն պատճառով, որ վերականգնվեց սահմաններից գուրկ, դե-յուրե չճանաչված մի պետականություն, այլև այն պատճառով, որ նա չէր կարող 1991-ին Կարսի պայմանագրի առկայության և ԼՂՀ հռչակման պայմաններում կայանալ նախկին ԱդրԽՍՀ սահմաններում: Իմանալով այդ բոլորը, Բաքվում 1991-ին ընդհանրապես սահմաններ չհռչակեցին, երբ պարտավոր էին դա անել:

Եթե միջազգային իրավունքի՝ խնդրո առարկա սկզբունքների տեսակետից այդ իրողությունը համեմատելու լինենք Արցախի ինքնորոշման հետ, ապա դժվար չի լինի արձանագրել այն փաստը, որ ինչպես 1918-1920 թվականներին, այնպես էլ 1991-ին հայոց այդ երկրամասի ժողովուրդը ինքնորոշման իր իրավունքը իրագործել է անբասիր ձևով: 1918-1920 թվականներին երկրամասի (այդ թվում և՛ նրա կենտրոնական ու հյուսիսային շրջանների) ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները, արտահայտելով Արցախի ողջ ազգաբնակչության կամքը, Արցախը (Լեռնային Ղարաբաղը) հռչակել են Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: 1991-ին՝ ԽՍՀՄ լուծարման ընթացքում, Լեռնային Ղարաբաղի այն շրջաններում, որտեղ ադրբեջանցի թուրքը չէր հասցրել իրագործել ցեղասպանություն, ԼՂ ժողովուրդը դարձյալ իրացրել է ինքնորոշման իր իրավունքը՝ հռչակելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Եվ վերջում մեր տեսակետից կարևոր մի դիտարկում: ԵԱՀԿ-ն հակամարտության կարգավորման իր առաջարկություններում խնդրի հանգու-

ցալուծումը բացահայտ կամ անբացահայտ ձևով կապում է 1991-ին ԼՂԻՄ-ում կայացած ինքնորոշման ակտի՝ անկախության մասին հանրաքվեի հետ: Այս առումով առավելագույնը, որ հայկական կողմը փորձում է ձեռք բերել, կապված է այն բանի հետ, որ անկախության հռչակմանը և հանրաքվեին մասնակցել է նաև Շահումյանի շրջանի բնակչությունը: Չնայած դրան, ԵԱՀԿ-ն, այնուամենայնիվ, շարունակաբար ակնարկում է, որ ԼՂՀ-ն իր գործերը պետք է ետ քաշի մինչև նախկին ԼՂԻՄ-ի սահմանները:

Ուրեմն՝ ակնհայտ է, որ կարևորություն է տրվում ԼՂԻՄ-ում կայացած ինքնորոշման հանրաքվեին որպես ինքնորոշման սկզբունքի իրագործման ակտի, որպես կարգավորման համար անհրաժեշտ իրավական փաստարկի ու հիմքի: Իսկ այն, որ հակառակ կողմը բնավ չունի այդ փաստարկը, որ այդտեղ ոչ մի անգամ ինքնորոշման «գործողության» չեն դիմել, քննության չի առնվում: **Այս մասին լրում է նաև հայկական կողմը:**

Լավագույն դեպքում ԵԱՀԿ-ն, ինչպես նշվեց, կարող է հաշվի նստել այն փաստի հետ, որ Շահումյանի շրջանի բնակչությունը նույնպես մասնակցել է հանրաքվեին: Դա էլ ինքնորոշման սկզբունքի գործադրման փաստարկ է: Իսկ ահա Քարվաճառը, Բերձորը (Լաչինը), Ֆիզուլին, Ղուբաթլուն օկուպացված տարածքներ պիտի համարվեն, քանի որ նրանց բնակչությունը չի մասնակցել ԼՂՀ անկախության հանրաքվեին: **Քննարկումից դուրս է մնում «աննշան» մի հանգամանք.** այդ տարածքները ԼՂԻՄ-ի ստեղծման մասին միակ փաստաթղթի համաձայն՝ պիտի ԼՂԻՄ-ի մաս կազմեն: Դա Կավբյուրոյի որոշումն է, և մենք անտեսում ենք այն հանգամանքը, որ դա Խորհրդային Հայաստանին բռնի կերպով պարտադրված որոշում էր: Բայց ավելի կարևոր է **երկրորդ «աննշան» հանգամանքը:** ԼՂՀ անկախության հանրաքվեին մասնակցել է հայկական այն բնակչությունը, որին չէր կարողացել ցեղասպանել Բաքուն: Ստացվում է, որ եթե խորհրդային բանակի օգնությամբ Բաքվին հաջողվեր մինչև հանրաքվեն կոտորել կամ դուրս մղել Շահումյանի շրջանի հայերին, ապա ԵԱՀԿ-ն այդ հարցին ոչ մի կերպ չէր անդրադառնա, ինչպես չի անդրադառնում, ասենք՝ Մումգալիթի կամ Բաքվի հայության հարցերին: Եթե ադրբեջանցի թուրքին մինչև հանրաքվեն հաջողվեր դուրս մղել Մարտակերտի հայերին, այսօր միջազգային իրավունքով և եվրոպական արժեքներով առաջնորդվող այդ կառույցը կպնդեր, որ Մարտակերտի հարցը քննարկումից դուրս է, քանի որ այդտեղ բնակչությունը չի մասնակցել հանրաքվեին:

Ուրեմն՝ եթե մնար միայն Ստեփանակերտը, ԵԱՀԿ կողմից կքննարկվեր միայն Ստեփանակերտի՞ հարցը: Արդյոք չի՞ ստացվում, որ ԵԱՀԿ-ը՝ միջազգային իրավունքով և եվրոպական արժեքներով առաջնորդվող այդ ամենապատասխանատու կառույցը, օրինականացնում է ցեղասպանությունը որպես էթնոքաղաքական կոնֆլիկտների լուծման միջոց և դրանց կարգավորման հիմքում դնում է նրա «արդյունքները»: Դրա համար էլ չի դիմում հիմնախնդրի իրավական փաթեթին և չի քննարկում որևէ փոխհատուցում չատացած, իր հազարամյա բնակչության տարածքներից, իր կառուցած քաղաքներից ու գյուղերից, իր հիմնած հանրապետությունից բռնությամբ դուրս մղված ադրբեջանահայության իրավունքների հարցը:

Summary

THE PROBLEM OF THE LEGITIMACY OF THE BORDERS OF THE AZERBAIJANI REPUBLIC

From the Viewpoint of Self-determination and the Principles of
Territorial Integrity

Alexander S. Manasyan

All the three state formations which have emerged in Transcaucasus with the name “Azerbaijan” since 1918 have developed through an evasion or violation of principles of self-determination and territorial integrity of the two fundamental principles of the international law. In 1918 the Azerbaijani Democratic Republic (ADR) was established by the Turkish regular army without the implementation of the principle of self-determination. ADR did not have recognized and/or internationally confirmed the borders. In 1920 the 11th Red Army of the Soviet Russia subverted the ADR established by the Turkish army and founded the Azerbaijani Soviet Socialist Republic (AzSSR). The principle of self-determination was not implemented in this case either. This time the principle of self-determination was violated with the justification that AzSSR was established as a non-national, an international republic. On this very grounds, Nagorno Karabakh and Nakhijevan were alienated from the Soviet Armenia and annexed to non-national AzSSR. Nakhijevan was annexed to AzSSR with the status of a territory under AzSSR protectorate and has maintained this status by the Kars agreement which is active up till now. In 1991 Baku refused to be the successor of AzSSR and became the successor of ADR which was established by the Turkish army and disappeared without having legitimate borders. The newly independent Azerbaijani Republic also emerged through a violation of principles of territorial integrity and self-determination both because it restored a statehood which was deprived of borders and was not recognized de jure, and because it could not be established in the territory of AzSSR in 1991 when the Kars agreement was active and NKR had declared its independence. This was obvious in 1991, and Baku did not declare any borders, while they ought to declare their borders. The Azerbaijani Republic, if examined from the viewpoint of principles of self-determination and territorial integrity, is an illegal formation.